# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ծածկագրով՝ էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ի. Մարտունի «10» «փետրվարի» 2026թ.

ժամը 16:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտյոմ Քոչարյան

Անդամներ՝ Վահան Թամոյան

Թաթուլ Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Էդվին Գրիգորյան

**«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/06» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի մասին**

1. ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել eauction.armeps.am համակարգում 09.02.2026թ-ին ժամը 15:45-ին:
2. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է 2026 թվականի փետրվարի 10-ին, ժամը 15:45-ին:
3. Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը էլ. փոստ, հեռ. համար |
|---|---|---|---|
| 1 | **«Սամվել Ադամյան Բաթի» Ա/Ձ** | Ք.Աբովյան, Հանրապետության փ. շ.1/6, 13բն | samvel.adamyan1977@mail.ru +37491191601 |
| 2 | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | Գրիգոր Լուսավորիչ 7 | yerevan332@gmail.com +37494281096 |
| 3 | «Սիմոնյան Արարատ Անդրանիկի» ԱՁ | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վ. Գետաշեն Ա թղմ. 1 Փ. Տ.76, | usetechnolog@gmail.com +37494263449 |
| 4 | «ՖԵՆԻՔՍ ՕՆ» ՍՊԸ | ք.Գյումրի, Անկախության Հրապարակ, Ճ 9Ա | feniixon@gmail.com +37493199337 |
| 5 | «ՍԵԳ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան Կուրղինյան նրբ. 6 շենք, բն.32 | seg_tender@mail.ru +37455-01-90-60 |
| 6 | «Ամուրա» ՍՊԸ | Ավան, 2-րդ միկր, 2/10 | amura.tender@mail.ru (+374) 33 844886 |
| 7 | «ՎԱՆԿՈՄՊ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան Կուրղինյան նրբ. 6 | vancomp@bk.ru +37441-50-18-24 |
| 8 | «ԱՅՓԻՍԵՔ» ՍՊԸ | Շահումյան 16 փ, տ 20/1 | ipsec77@mail.ru +374 33331180 |
| 9 | «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ | ԱՐԱՐԱՏ, , Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ 30 | gnumner2024@mail.ru +37477337513 |
| 10 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ | Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի | btraiding@list.ru +37498680718 |
| 11 | **«ՄՄ ՏԵԽ» ՍՊԸ** | ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 26/11 | mmmtechham@gmail.com +37477022080 |

4. «ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/06» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակիցների առաջարկած գները հետևյալն են.

| Չ/հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | Սամվել Ադամյան Բաթի ԱՁ | 400000 AMD | 400000 AMD | 0 % | 400000 AMD | 188000 AMD | 0 % | 188000.00 AMD | |
| 1 | 2 | ՆԵՔՍԱ ՍՊԸ | 400000 AMD | 2500000000 AMD | 20 % | 3000000000 AMD | 255000 AMD | 20 % | 306000.00 AMD | |
| 1 | 3 | Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ | 400000 AMD | 331300 AMD | 20 % | 397560 AMD | 278000 AMD | 20 % | 333600.00 AMD | |
| 1 | 4 | «ՖԵՆԻՔՍ ՕՆ» ՍՊԸ | 400000 AMD | 333111 AMD | 20 % | 399733.2 AMD | 288000 AMD | 20 % | 345600.00 AMD | |
| 1 | 5 | ՍԵԳ ՍՊԸ | 400000 AMD | 399700 AMD | 20 % | 479640 AMD | 292300 AMD | 20 % | 350760.00 AMD | |
| 1 | 6 | Amura | 400000 AMD | 900000000 AMD | 20 % | 1080000000 AMD | 327987 AMD | 20 % | 393584.40 AMD | |
| 1 | 7 | Վանկոմպ ՍՊԸ ՍՊԸ | 400000 AMD | 398400 AMD | 0 % | 398400 AMD | 398400 AMD | 0 % | 398400.00 AMD | |
| 1 | 8 | ԱՅՓԻՍԵՔ ՍՊԸ | 400000 AMD | 500000 AMD | 20 % | 600000 AMD | 500000 AMD | 20 % | 600000.00 AMD | Մերժված |
| 1 | 9 | «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ | 400000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000.00 AMD | Մերժված |
| 1 | 10 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ | 400000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000.00 AMD | Մերժված |
| 2 | 1 | Վանկոմպ ՍՊԸ | 60000 AMD | 162200 AMD | 0 % | 162200 AMD | 162200 AMD | 0 % | 162200.00 AMD | Մերժված |
| 2 | 2 | ՍԵԳ ՍՊԸ | 60000 AMD | 163400 AMD | 20 % | 196080 AMD | 163400 AMD | 20 % | 196080.00 AMD | Մերժված |
| 2 | 3 | «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ | 60000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000.00 AMD | Մերժված |
| 2 | 4 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ | 60000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000.00 AMD | Մերժված |

| Չ/հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 3 | 1 | Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ | 40000 AMD | 33200 AMD | 20 % | 39840 AMD | 33200 AMD | 20 % | 39840.00 AMD | |
| 3 | 2 | Վանկոմպ ՍՊԸ | 40000 AMD | 123400 AMD | 0 % | 123400 AMD | 123400 AMD | 0 % | 123400.00 AMD | Մերժված |
| 3 | 3 | ՍԵԳ ՍՊԸ | 40000 AMD | 128400 AMD | 20 % | 154080 AMD | 128400 AMD | 20 % | 154080.00 AMD | Մերժված |
| 3 | 4 | «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ | 40000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000.00 AMD | Մերժված |
| 3 | 5 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆ Գ 20» ՍՊԸ | 40000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000.00 AMD | Մերժված |
| 4 | 1 | Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ | 210000 AMD | 174000 AMD | 20 % | 208800 AMD | 167000 AMD | 20 % | 200400.00 AMD | |
| 4 | 2 | ՍԵԳ ՍՊԸ | 210000 AMD | 209700 AMD | 20 % | 251640 AMD | 168780 AMD | 20 % | 202536.00 AMD | |
| 4 | 3 | Վանկոմպ ՍՊԸ | 210000 AMD | 208800 AMD | 0 % | 208800 AMD | 208800 AMD | 0 % | 208800.00 AMD | |
| 4 | 4 | «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ | 210000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000.00 AMD | Մերժված |
| 4 | 5 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆ Գ 20» ՍՊԸ | 210000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000.00 AMD | Մերժված |
| 5 | 1 | ՆԵՔՍԱ ՍՊԸ | 140000 AMD | 2500000000 AMD | 20 % | 3000000000 AMD | 96000 AMD | 20 % | 115200.00 AMD | |
| 5 | 2 | ԱՅՓԻՍԵՔ ՍՊԸ | 140000 AMD | 300000 AMD | 20 % | 360000 AMD | 100000 AMD | 20 % | 120000.00 AMD | |
| 5 | 3 | Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ | 140000 AMD | 115800 AMD | 20 % | 138960 AMD | 103000 AMD | 20 % | 123600.00 AMD | |
| 5 | 4 | ՍԵԳ ՍՊԸ | 140000 AMD | 139900 AMD | 20 % | 167880 AMD | 107850 AMD | 20 % | 129420.00 AMD | |

| Չ/h | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 5 | 5 | Amura | 140000 AMD | 900000000 AMD | 20 % | 1080000000 AMD | 113850 AMD | 20 % | 136620.00 AMD | |
| 5 | 6 | ՄՄՄ ՏԵԽ ՍՊԸ | 140000 AMD | 115000 AMD | 20 % | 138000 AMD | 115000 AMD | 20 % | 138000.00 AMD | |
| 5 | 7 | Վանկոմպ ՍՊԸ | 140000 AMD | 138700 AMD | 0 % | 138700 AMD | 138700 AMD | 0 % | 138700.00 AMD | |
| 5 | 8 | «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ | 140000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000 AMD | 100000000 AMD | 20 % | 120000000.00 AMD | Մերժված |
| 5 | 9 | «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ | 140000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000 AMD | 444000000 AMD | 20 % | 532800000.00 AMD | Մերժված |

5. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում.

- *Սամվել Ադամյան Բաթի ԱՁ-ն՝ 1-ին չափաբաժնի մասով,*
- *Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ-ն 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով,*
- *ՆԵՔՍԱ ՍՊԸ-ն 5-րդ չափաբաժնի մասով,*
- *2-րդ չափաբաժնի մասով մասնակիցների հայտերը ավտոմատ կերպով մերժվել են համակարգի կողմից՝ նախահաշվային գնից բարձր գին առաջարկելու համար:*
-

***Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մինչև 2026 թվականի փետրվարի 18-ը՝ հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության համար:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 18.02.2026թ. ժամը 11:00-ին**

6. Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից՝

- Սամվել Ադամյան Բաթի ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահաջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- «ՆԵՔՍԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հրավերի պահաջներին անհամապատասխան հայտ: Մասնավորապես՝ *իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում լրացված չէ ֆիրմային անվանումը, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը:*
- Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ-ն գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել լիազորագրով, ըստ լիազորագրի «Սիմոնյան Արարատ Անդրանիկի» ԱՁ-ն լիազորում է Կարեն Կոմիտասի Սիմոնյանին, որ իր ԱՁ-ի անունից մասնակցի բոլոր տեսակի գնումներին, գնանշման հարցումներին, էլեկտրոնային աճուրդներին, ներկայացնի հայտեր, կնքի պայմանագրեր, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում մրցույթների հետ կապված էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացնի այլ փաստաթղթեր, մասնակցի բանակցությունների և հանդես գա իր անունից: Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Կարեն Կոմիտասի Սիմոնյանը հանդիսանում է Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ և հանդիսանում է համայնքային ծառայող: Ըստ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի՝ *Համայնքային ծառայողն իրավունք չունի՝ լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված*

*հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն, կամ անմիջականորեն վերահսկում է ինքը: Ինչպես նաև ըստ «Հանրային ծառայության» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝*

- *1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.*
- *2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.*

Քանի որ Կարեն Սիմոնյանը հանդիսանում է Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ, հետևաբար առաջանում է ներքին տեղեկատվության առավելություն, հավասար պայմանների խախտում, ինչպես նաև առաջանում է ծառայողական դիրքի հնարավոր օգտագործման ռիսկ, շահերի բախման և հակամրցակցային իրավիճակի ռիսկ: Հետևաբար Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ-ի ներկայացուցչի լիազորությունն իրավաչափ չէ, առաջարկը ներկայացված է շահերի բախման պայմաններում և խախտվել են«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մրցակցային սկզբունքները, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը և «Հանրային ծառայության» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահանջներով, որոշեց՝ կասեցնել նիստը և «ՆԵՔՍԱ» ՍՊԸ-ին իրավերով՝ սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հաշվի առնելով, որ տվյալ գնումն իրականացվել է Մարտունու համայնքապետարանի կողմից և Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ-ի լիազորված անձ՝ Կարեն Կոմիտասի Սիմոնյանը, հանդիսանում է նույն մարմնի աշխատակից, ստեղծվում է՝ շահերի բախման ռիսկ, ներքին տեղեկատվության հնարավոր օգտագործման հավանականություն, մրցակցային հավասար պայմանների խաթարում:

Ելնելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 3-րդ 2-րդ մասին 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև հաշվի առնելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և «Հանրային ծառայության» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, Սիմոնյան Արարատ Անդրանիկի ԱՁ-ի հայտը գնահատել որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժել հայտը: Ինչպես նաև, վերոնշյալի մասին զեկուցել պատվիրատուի ղեկավարին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0**

7. **Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

- ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել փետրվարի 20-ին ժամը 10:00-ին, Մարտունու համայնքապետարան, ք. Մարտունի, Շահումյան 2 հասցեում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _______________ Արտյոմ Քոչարյան

Անդամներ _______________ Թաթուլ Դավթյան

_______________ Վահան Թամոյան

Քարտուղար՝ _______________ Էդվին Գրիգորյան